ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Հայկ Արթուրի Դեհերյանի «Երևանի ստորգետնյա տարածքների զարգացման և օգտագործման ճարտարապետական առանձնահատկությունները» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ, ներկայացված՝ ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ժամանակակից աշխարհում ուրբան միջավայրի խիտ բնակեցմամբ ու կառուցապատմամբ, ինչպես նաև ստորգետնյա և վերգետնյա տարածքների ներդաշնակ և համակարգված շահագործման խնդիրներով պայմանավորված՝ ակտիվացել է ստորգետնյա տարածքների օգտագործման նկատմամբ հետաքրքրությունը: Մետրոյի, պահեստավորման, կոմունալ համակարգերի և ապաստարանների համար օգտագործվող ստորգետնյա տարածքները ժամանակակից քաղաքներում վերածվում են բազմագործառույթային միջավայրերի՝ ծառայելով հասարակական, առևտրային և մշակութային նպատակների:

Երևան քաղաքը, նույնպես, այս տեսակետից կանգնած է լուրջ մարտահրավերների առջև, քանզի գերբնակեցումը, տրանսպորտային գերծանրաբեռնվածությունը, հողի սահմանափակ հասանելիությունը լուրջ խնդիրներ են հարուցում և պահանջում են կայուն զարգացման անհրաժեշտություն: Հենց սրանով է պայմանավորված ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտությունը նպատակ է հետապնդում ընդհանրացնել Երևան քաղաքի ստորգետնյա տարածքների օգտագործման արդի խնդիրները և դրանց հետագա զարգացման համար մշակել համակարգային մոտեցումներ:

Ատենախոսությունը բաղկացած է 124 էջ տեքստային մասից և 33 էջ հավելվածից: Տեքստային մասը ներառում է ներածություն, երեք գլուխներ, եզրակացություն և 103 անուն օգտագործված գրականության ցանկ:

Ներածությունում ատենախոսը հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները և տրվել է աշխատանքի մեթոդաբանությունը:

Ատենախոսության առաջին «Ստորգետնյա տարածքների օգտագործման միջազգային փորձի ուսումնասիրություն» վերնագրված գլխում քննարկվել են ստորգետնյա տարածքների օգտագործման դրդապատճառները, կատարվել է պատմական զարգացման, ինչպես ատենախոսն է ասում համառոտ, բայց մեր կարծիքով բավական ընդարձակ քննություն: Ներկայացվել է տարբեր ժամանակաշրջանների և վայրերի ստորգետնյա

տարածքների առաջացման և զարգացման գործընթացը: Դիտարկվել են ստորգետնյա տարածքների օգտագործման հայտնի վաղագույն ստորգետնյա քաղաքներից մինչև 20-րդ դարը ներառյալ օրինակները: Դուրս են բերվել բոլոր այն գործոնները (քաղաքաշինական ճանապարհատրանսպորտային, գործառույթային, սոցիալական, էկոլոգիական, տնտեսական, իրավական), որոնք նպաստում են ստորգետնյա տարածքների օգտագործումն արդյունավետ դարձնելուն: Կատարվել է ստորգետնյա տարածքների դասակարգում ըստ իրենց ծավալատարածական բնութագրերի:

Ամփոփելով առաջին գլուխը՝ ստորգետնյա տարածքների օգտագործման միջազգային փորձի համալիր ուսումնասիրության արդյունքում, Հայկ Դեերյանը գտնում է, որ ստորգետնյա տարածքները քաղաքային միջավայրի կարևորագույն բաղկացուցիչ տարրերից են և տալիս են քաղաքի խիտ կառուցապատված վայրերում նոր անհրաժեշտ մակերեսների և գործառնական գոտիների կերտման հնարավորություն՝ լուծելով բարձր ուրբանիզացման մակարդակ ունեցող քաղաքների ձևափոխման խնդիրները: Առանձնացվել են նաև ստորգետնյա տարածքների նախագծման, օգտագործման և հեռանկարային զարգացման գործընթացների վրա ազդող հատկանիշները:

Ատենախոսության **երկրորդ գլուխն** ամբողջությամբ անդրադարձ է Երևանի կենտրոնի ստորգետնյա տարածքների (գետնանցումներ, մետրո, առևտրահասարակական տարածքներ) ներկայացմանը: Կատարվել է վերջիններիս վերլուծություն ըստ գործառույթային առանձնահատկությունների, հասանելիության և քաղաքային միջավայրում ունեցած տեղադիրքի:

Ներկայացվել է Երևանի մետրոյի զարգացման պատմական հատվածը, որից հետո կատարվել է կայարանների և մուտքային հանգույցների հայեցակարգային վերլուծություն: Ուսումնասիրվել են առևտրահասարակական ստորգետնյա տարածքները՝ ելնելով քաղաքային միջավայրում գործառույթային ներգրավման առանձնահատկություններից: Քննարկվել են ծավալահատակագծային լուծումները և դրանց չափորոշիչները:

Առանձին քննարկման առարկա են դարձել Երևանի կենտրոնի ինչպես նախկինում արված գոտիավորման առաջարկներն ու առ այսօր իրականացված, այնպես էլ չիրականացված նախագծերը: Ուսումնասիրվել են 2007 թվականին մշակված Երևան քաղաքի «Կենտրոն» թաղային համայնքի տարածքի գոտիավորման նախագծում առկա ստորգետնյա քաղաքաշինության զարգացման առաջարկները, ինչպես նաև վերլուծվել են Սայաթ-Նովա և Գլխավոր պողոտաների, Ֆրանսիայի և Հանրապետության հրապարակների, Հանրապետության հրապարակից մինչև Մոսկվայի հրապարակ ընկած հատվածի հայեցակարգային առաջարկները:

Արդյունքում դուրս են բերվել Երևանի կենտրոնում գոյություն ունեցող ստորգետնյա

տարածքների օգտագործման առկա խնդիրները (մեկուսացվածություն, փոխկապակցվածության բացակայություն, ուղղահայաց կապի խզվում, գործառույթների անհամատեղելիություն, հոսքերի տարանջատման բացակայություն)։ Ատենախոսն իրավացիորեն գտնում է, որ խնդիրների առաջացումը և լուծումների ոչ հստակ լինելը ընդհանուր մոտեցումների և հստակ չափորոշիչների համակարգվածության բացակայության արդյունք է։

Հաջորդ՝ երրորդ գլխում ունենալով դուրս բերված խնդիրները Հայկ Դեերյանը փորձում է դրանց համար լուծումներ առաջարկել։ Առաջին հերթին ատենախոսը գտնում է, որ Երևանի կենտրոնի ստորգետնյա տարածքների համալիր օգտագործման գոտիավորման սխեմա պետք է նախատեսվի, որի շնորհիվ կստեղծվի անընդհատ հետիոտնային փոխկապակցվածություն քաղաքաշինական դոմինանտների, մշակութային և վարչական գոտիների, Երևան քաղաքի գլխավոր կանաչապատ զանգվածների միջև։

Մշակվել է Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) գործիքակազմի վրա հիմնված մեթոդ, որի շնորհիվ կարելի է իրականացնել քաղաքաշինական եռաչափ ուսումնասիրություններ՝ բացահայտելով Երևան քաղաքում նախատեսվող ստորգետնյա տարածքների իրատեսական ծավալատարածական չափորոշիչները։ Կիրառվել է "PESTEL" մեթոդը՝ որպես ստորգետնյա տարածքների զարգացման տնտեսական պայմանների գնահատման միջոց, իսկ տեսական մեթոդի գործառնական կիրառության սխեմատիկ օրինակ է վերցվել Երևանի Աբովյան և Կորյուն փողոցների խաչմերուկում գտնվող գետնանցումից մինչև Աբովյան և Իսահակյան փողոցների խաչմերուկում գտնվող ստորգետնյա «Մետրոնոմ» առևտրի և ժամանցի կենտրոն ընկած հատվածը, ինչպես նաև «Մետրոնոմ»-ից մինչև Իսահակյան և Տերյան փողոցների խաչմերուկում նախատեսվող գետնանցումը։

Առաջարկվել են մի շարք քաղաքաշինական և տարածական պլանավորման միջոցառումներ, մոտեցումներ և դասակարգումներ, որոնք անհրաժեշտ է ներդնել՝ ստորգետնյա տարածքների օգտագործումը համակարգելու, վերահսկելու, զարգացնելու, օբյեկտիվորեն գնահատելու, որոշումներ կայացնելու և հետագա փոփոխություններին պատրաստ լինելու համատեքստում։

Պետք է նշել, որ առաջարկված մեթոդներն ու գործիքակազմը ունեն կիրառական նշանակություն և ատենախոսի կողմից առաջարկված՝ ստորգետնյա տարածքների համակարգված օգտագործման շնորհիվ կլուծվեն են մի շարք քաղաքաշինական խնդիրներ և կպահպանվի Երևանի կենտրոնի պատմամշակութային կերպարը։

Բարձր գնահատելով Հայկ Դեերյանի ատենախոսությունն ու կատարած աշխատանքը, կուզենայինք **ներկայացնել որոշ նկատառումներ**։

Ներածության մեջ գրականության տեսությունը միայն թվարկման կարգով է ներկայացված: Անհրաժեշտություն կար ունենալ մեկնաբանություններ:

Ցանկալի կլիներ առաջին գլխի պատմական ակնարկը համառոտ տեսնել և ավելի շատ ներկայացվեին ստորգետնյա տարածքների օգտագործման հայկական օրինակները (ժայռափոր Անին): Այստեղ տարանջատում պետք է լիներ ժայռափոր համալիրների և ստորգետնյա կառուցվածքների միջև:

Աշխատանքում առկա հիմնական դրույթներին նախկինում էլ անդրադարձ եղել է, կարելի էր ավելի հստակ ձևակերպվեր այն նորույթը, որ բերում է ներկայացված ատենախոսությունը:

Քանի որ ատենախոսն ընտրել է համալիր քննության մեթոդաբանությունը կարելի էր նաև առաջադրված խնդիրներին ավելի արդյունավետ լուծումներ տալու համար, օգտագործել նաև հանրային քննարկումների և հարցումների եղանակը:

Մեր կարծիքով, քանի որ Երևանի կենտրոնի կարևորությունը որպես պատմական, մշակութային և հանրային հանգույց միանշանակ է, պետք էր ստորգետնյա տարածքների վերաօգտագործմանը միտված առաջարկները նպաստեին նաև ժառանգության հասանելիությանն ու զբոսաշրջային բիզնեսում ներգրավվածությանը:

Ասվածն, իհարկե, չի նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Ներկայացված թեկնածուական ատենախոսությունը ընդգրկուն և ավարտուն ուսումնասիրություն է, համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ Հայկ Արթուրի Դեերյանն արժանի է իր հայցած՝ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
ՃՇՀԱՀ-ի ՃՏՊԺ ամբիոնի պրոֆեսոր,
ճարտարապետության դոկտոր՝ Լ. Վ. Կիրակոսյան

Լ. Վ. Կիրակոսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.
ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար՝
տ.գ.թ., դոցենտ Լ. Հ. Լևոնյան

14.07.2025թ.